

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«ՄԱՌԻՆԹԻՆ ՔԸՆՍԹՐԱՔՇՆ»

ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԱԿԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ
ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ 2024-2027ԹԹ. ԿԱՏԱՐՎԵԼԻՔ
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Տնօրեն՝

Է. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Երևան 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6
Նախատեսվող գործունեության անվանումը, նպատակը, գտնվելու վայրը	6
Նախատեսվող գործունեության բնութագիրը	14
Նախագծման նորմատիվ-իրավական հենքը	22
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	27
Ռեիլեֆ, երկրաձևաբանություն, սեյսմիկ բնութագիր, սողանքներ	27
Շրջանի կլիման	31
Մթնոլորտային օդ	33
Ջրային ռեսուրսներ	34
Հողեր	37
Բուսական և կենդանական աշխարհ	38
Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ	42
3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	44
Ենթակառուցվածքներ	44
Հողերի տնտեսական յուրացման բնութագիր	47
Պատմության, մշակութային հուշարձաններ	48
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	49
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	53
6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	62
7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ	65
Գրականություն	68
Հավելված 1. Հատվածներ Եղեգնուտ բնակավայրի կադաստրային քարտեզից, իրավաբանական անձանց համաձայնագրերը	69

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Ընդերքօգտագործման իրավունք՝ համապատասխան ընդերքօգտագործման համաձայնությունով կամ թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով հավաստվող՝ ընդերքի որոշակի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման բացառիկ իրավունքներ.

Երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել կամ վերագնահատել օգտակար հանածոների պաշարները.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

Բույսերի Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական

առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով
Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման

հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ

Արտադրական լցակույտեր՝ օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոններ (այդ թվում՝ պոչանքներ)՝ տեղադրված երկրի մակերևույթի վրա կամ լեռնային փորվածքներում:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▪ *Նախատեսվող գործունեության անվանումը, նպատակը, գտնվելու վայրը*

Արմավիրի մարզի Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի Հարավ-արևելյան նախատեսվում է իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Աշխատանքների համար ընտրված տարածքը վարչական տեսակետից ներառված է Մեծամոր խոշորացված համայնքի Եղեգնուտ բնակավայրի սահմաններում (նկար 1-4): Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը համայնքային կադաստրային քարտեզներում հաշվառված է որպես պետական սեփականության (առկա են նաև այլ իրավաբանական անձանց վարձակալության իրավունքներ) գյուղատնտեսական, ջրային նպատակային նշանակության հողեր: Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են. հյուսիսային լայնությունը՝ 40° 04' 50" և արևելյան երկայնությունը՝ 44° 09' 05":

Հայցվող տարածքի կոորդինատները ըստ ArmWGS-84 համակարգի ներկայացված են ստորև .

1.	4438838.0228, 8426675.8016	14.	4438214.4654, 8427187.5682
2.	4439022.2272, 8426945.9281	15.	4438207.1200, 8427121.5160
3.	4438843.9988, 8427322.3059	16.	4438165.6531, 8427116.0969
4.	4438679.2089, 8427377.9311	17.	4438155.1667, 8427187.4030
5.	4438556.5538, 8427546.0300	18.	4438013.6109, 8427187.6994
6.	4438539.6074, 8427662.9502	19.	4438004.6771, 8427435.0428
7.	4438588.6406, 8427931.7546	20.	4437914.5127, 8427415.9983
8.	4438789.5997, 8428054.1105	21.	4437986.7811, 8427082.1606
9.	4438741.4514, 8428268.0937	22.	4438422.1933, 8427092.8290
10.	4438459.0426, 8428122.9995	23.	4438597.9958, 8427033.6740
11.	4438245.9853, 8427865.0729	24.	4438697.0898, 8426931.8583
12.	4438484.1700, 8427861.0945	25.	4438723.8306, 8426823.5758
13.	4438502.0942, 8427184.3641	26.	4438838.0228, 8426675.8016


Եղեգնուտ բնակավայրի բնակելի և արտադրական շինությունները գտնվում են հայցվող տեղամասից 0.5կմ հեռավորության վրա: Հայցվող տեղամասի հարավային եզրագիծը համընկնում է թռչնաբուծական տնտեսության տարածքի հետ: Տեղամասից 0.23-0.4կմ հեռավորության վրա են գտնվում բազմամյա տնկարկներով (այգիներով) զբաղեցրած հողերը, իսկ մոտ 0.6կմ հեռավորության վրա՝ գյուղատնտեսական նպատակներով մշակվող հողատարածքները:

Տեղամասից մոտ 0.6-0.7կմ հյուսիս անցնում է Մ5-Մրգաշատ-Արևիկ-Երասխահուն S-3-50 տեղական նշանակության ավտոճանապարհը:

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ARMAVIR MARZ

Մարզկենտրոնը ԱՐՄԱՎԻՐ
3 քաղաք, 95 բնակավայր
Մարզային նշանակության
ճանապարհների երկարությունը՝ 388 կմ


ARMAVIR the center
3 cities 95 settlements
Instate roads 388 km



◆ Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի Հարավ-արևելյան տեղամաս


Նկար 1.

ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտի հանրավայրի
 Հարավ-արևելյան տեղամաս
 Իրադրության սխեմա (տեղագրական քարտեզ)
 Կազմված է 1:25000 մասշտաբի K-38-137-B-6 և K-38-137-B-r
 տուպոգրաֆիական քերթերի հիմքի վրա




Նկար 2.

Եղեգնուտի ԱԿՄ հանրավայրի Հարավ-արևելյան տեղամասի
 Իրադրության սխեմա (տեղագրական քարտեզ)
 Կազմված է 1:10000 մասշտաբի K-137-B-6-3 և K-137-B-r-1
 տուպոգրաֆիական քերթերի հիման վրա



Նկար 3.

**Եղեգնուտի ԱԿԻՆ հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի
Իրավիճակային սխեմատիկ քարտեզ
Մասշտաբ 1:10000**



Կատարող *[Signature]* **Չ. Բաբայան**
(ստորագրություն) (Անուն, ազգանուն)
 Որակավորման վկայականի համարը 0133 տրման ամիս, ամսաթիվը _____
 Իրավաբանական անձի 29 082 635 Չավեն Բաբայան ամ 26.08.2012
(սխեմական զբանջան համարը) (անվանում)



Քվեման կետեր	Y	X	Գծափն լատեր (մետր)
1	8427082.1606	4437986.7811	435.54
2	8427092.8290	4438422.1933	185.49
3	8427033.6740	4438597.9958	142.08
4	8426931.8583	4438697.0898	111.54
5	8426823.5758	4438723.8306	186.75
6	8426675.8016	4438838.0228	326.96
7	8426945.9281	4439022.2272	416.44
8	8427322.3059	4438843.9988	173.92
9	8427377.9311	4438679.2089	208.09
10	8427546.0300	4438556.5538	118.14
11	8427662.9502	4438539.6074	273.24
12	8427931.7546	4438588.6406	235.28
13	8428054.1105	4438789.5997	219.33
14	8428268.0937	4438741.4514	317.50
15	8428122.9995	4438459.0426	334.54
16	8427865.0729	4438245.9853	238.22
17	8427861.0945	4438484.1700	676.97
18	8427184.3641	4438502.0942	287.65
19	8427187.5682	4438214.4654	66.46
20	8427121.5160	4438207.1200	41.82
21	8427116.0969	4438165.6531	72.07
22	8427187.4030	4438155.1667	141.56
23	8427187.6994	4438013.6109	247.50
24	8427435.0428	4438004.6771	92.15
25	8427415.9983	4437914.5127	341.57
1	8427082.1606	4437986.7811	

Կատարող *[Signature]* **Չ. Բաբայան**
(ստորագրություն) (Անուն, ազգանուն)
 Որակավորման վկայականի համարը 0133 տրման ամիս, ամսաթիվը 26.08.2012
 Իրավաբանական անձի 29 082 635 Չավեն Բաբայան ամ 26.08.2012
(սխեմական զբանջան համարը) (անվանում)



Նկար 4.

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները կատարվելու են «ՄԱՈՒՆԹԻՆ ՔԸՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերության կողմից. գրանցման համար 282.11.1239439, գրանցման ամսաթիվ 24.05.2022թ., հասցե Թբիլիսյան խճուղի, 3/19, Քանաքեռ-Զեյթուն, 0052, Երևան, Հայաստան:

Հայցվող տարածքի շրջանում, ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտ գյուղից մոտ 2.5կմ արևմուտք 1998-1999թթ.-ին գտնվող 2.3հա տարածքում ավազակոպճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ են կատարվել «Էկոսերվիս» ՊՓԲԸ «Միներալ» ԴԶ-ի մասնագետների (Գ.Գևորգյան, Ա.Բարսեղյան) կողմից:

Հետախուզական աշխատանքների արդյունքներով Եղեգնուտի հանքավայրի տարածքում հետախուզվել և հաշվարկվել են ավազակոպճային հումքի 82.1հազ.մ³ պաշարներ, 57% ավազի և 43% կոպճի պարունակությամբ:

Հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՀ օգտակար հանածոների պաշարների պետական հանձնաժողովի 1999 թվականի նոյեմբերի 30-ի №61 արձանագրությամբ:


Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասը գտնվում է բուն Եղեգնուտի հանքավայրից մոտ 1.4կմ հեռավորության վրա:

Հայցվող տեղամասից մոտ 5.2կմ հյուսիս-արևելք գտնվում է Ապագայի ԱԿԽ հանքավայրը, որի պաշարները հաստատվել են ՀԽՍՀ պաշարների տարածքային հանձնաժողովի 23.04.1971թ.-ի № 202 արձանագրությամբ, ներքոհիշյալ քանակությամբ և կարգերով (աղյուսակ 1).

Աղյուսակ 1.

Պաշարների կարգը	Քանակությունները, հազ.մ ³	
	որպես մանր և խոշոր լցանյութ բետոնի համար	այդ թվում պաշարներ, որոնք պիտանի են ասֆալտ-բետոնի խառնուրդի համար
A կարգով	1355.0	536.0
B կարգով	3047.0	541.0
C ₁ կարգով	9497.0	2098.0
Ընդամենը A + B + C ₁ կարգերով	13899.0	3175.0

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տեղամասի, Եղեգնուտի ԱԿԽ և Ապագայի ԱԿԽ հանքավայրերի տեղադիրքը ներկայացված է նկար 5-ում:



Նկար 5.

Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասը կառուցվածքային տեսակետից հարում է Միջին Արաքսյան տեկտոնական իջվածքին :

Տեղամասի շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ժամանակակից և վերին չորրորդական նստվածքային-բերվածքային առաջացումները, վերին պլիոցենի Արագածի շերտախմբի հրաբխային ապարները : Խորը հորիզոնները կազմում են վերին միոցենի Հրագդանի և Ջրվեժի շերտախմբերի, ստորին միոցենի Հացավանի շերտախմբի նստվածքային առաջացումները :


Նախնական դիտարկման արդյունքներով և ֆոնդային նյութերի ուսումնասիրության տվյալներով, Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասը ծագումնաբանորեն կապված է Արաքս գետի արտաբերման և ավամերձ ժամանակակից ու վերին չորրորդականի ալյուվիալ-դելյուվիալ նստվածքների հետ (նկար 6):

Տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են Արաքս գետի երրորդ դարավանդի լճային ծագման ավազները, կավերը, կավավազները, խճաքարերն ու գլաքարերը և առաջին դարավանդի վերին չորրորդական-ժամանակակից ճահճային առաջացումները և շինարարական ավազները: Հայցվող տեղամասի արևելյան ծայրամասային հատվածը ներկայացված է Արաքս գետի հին հունի ավազակավային, ավազախճազաքարային առաջացումներով:

Ըստ ֆոնդային տվյալների վերլուծության՝ ավազակոպճային խառնուրդի հաստվածքը համատարած հիմնատակվում է շագանակագույն կավերով, որոնք հանդիսանում են ավազակավային առաջացումների երկրաբանական սահման:

Ըստ էության, օգտակար հանածոյի մարմինը հետախուզվող տեղամասում ներկայացված է հորիզոնական կամ հորիզոնականին մոտ տեղադրված շերտաձև մարմնի տեսքով: Ավազակոպճային կուտակում ավազային և կոպճային ֆրակցիաները բաշխված են անկանոն, կավային նյութի առանձին շերտեր չեն հանդիպում (տեղանքում կատարված նախնական դիտարկումների տվյալներով): Վերջիններս ավազակոպճային խառնուրդում գտնվում են համատարած ցրված վիճակում: Հարակից հանքավայրերի ավազը միջին-խոշոր հատիկային են, տարակազմ-հատիկային է, հատիկներն ըստ ձևի անկյունավոր են, որոնց մակերևույթը թույլ հղկված է:

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵՂՆՈՒՄԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ
ՀԱՐՄԿ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԵՂԱՄԱՍ
ՀԵՏԱՆՈՒԶԱԿԱՆ ՓՈՐՎԱԾՔՆԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԵՐԻ ՔԱՐՏԵԶ
ՄԱՍՏՏԱՐ 1 : 10 000**



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- $bQ_{տր}$
- $aQ_{տր}$
- $IQ_{տր}$
- $Z/h-36$
- $Z/h-36$
- $Z/h-36$

Վերին չորրորդական-ժամանակակից: Հանձնային առաջացումներ:
 Վերին չորրորդական-ժամանակակից: Արարս գետի ինն հունի ավազավազային, ավազախճավաքարային առաջացումներ:

Վերին չորրորդական: Արարս գետի երրորդ դարավանդի մակարդակ: Լճային ծագման ավազներ, կավեր, կավավազներ, խճարարներ, գլաբարներ:


Գաբշ առգեղի հողերի շերտ:

Հետախուզական հորերը, որանց հերթական համարները:


Հանձնագած տարածքներ:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածք:

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ Ա-Ա՝ ԳՇՈՎ



ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ Բ-Բ՝ ԳՇՈՎ



Նկար 6.

Ավագների կազմը պոլիմիկտային է, ներկայացված է հրաբխային ապարների, դաշտային սպատի, քվարցի, կարբոնատային ապարների կտորներով:

Խճաքարային բաղադրիչը ներկայացված է ամուր հրաբխային, ավելի հազվադեպ՝ նստվածքային և մետամորֆային ապարների կլորավուն, հղկված կտորներով: Գերակշռում է 10-40մմ ֆրակցիայի խճազլաքարայինն զանգվածը:

Ինչպես արդեն նշվել է, տեղամասի արևելյան հատվածը համընկնում է Արաքս գետի հին հունի տարածքի հետ:

Արաքսի հնահունի 1.6-2.0մ խորություններում տարածված է գրունտային ջրերի անճնշում ջրատար հորիզոն, ինչի արդյունքում գարնան-աշնան ամիսներին, ինտենսիվ տեղումների ժամանակ տեղամասին հարակից տարածքներում դիտվում են ջրակալված հատվածներ:

Ավազակոպճային շերտը ծածկված է 0.1-0.3մ հզորությամբ էյուվիալ-դէյուվիալ առաջացումներով՝ բույսերի արմատներով սերտաճած, ավազի հետ խառնված գորշ ռոռգելի հողերի շերտով:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի օգոստոսի 11-ի N06-Ն հրամանի հավելված 3-ի հրահանգի աղյուսակ 1-ի՝ երևակմունը պատկանում է 2-1 խմբին՝ 2.1. բոլոր ծագումնաբանական տիպերի խոշոր և միջին շերտային ու շերտաձև հանքավայրեր՝ օգտակար ստվարաշերտի ոչ կայուն կառուցվածքով (ոչ կոնդիցիոն ապարների նրբաշերտերով) և հզորությամբ կամ ավազի ու կոպճի փոփոխական որակով (տարբեր տեսակներն ու մակնիշները տարածականորեն չեն երկրաչափացվում):

▪ **Նախատեսվող գործունեության բնութագիրը**

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող Հարավ-արևելյան տեղամասի տարածքում կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը կազմված է ըստ «Инструкция по составлению проектов и смет на геологоразведочные работы» և «Ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման» հրահանգների հանձնարարականների:

Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երկրաբանահանույթային, մակերևութային հետախուզական փորվածքների անցման, փաստագրման և նմուշարկման աշխատանքների համալիրով:

Համաձայն «Ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգ»-ի՝ ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության, հայցվող տեղամասի ավազակոպճային խառնուրդի կուտակը համապատասխանում է 2-1 խմբին:

Այս խմբի հանքավայրերի համար նախատեսված է պաշարների դասակարգման համար նախատեսված են հետախուզական ցանցի խտության հետևյալ բնութագրերը:

Աղյուսակ 2.

Հանքավայրի խումբը	Հանքավայրի տիպը	Փորվածքների միջև հեռավորությունն ըստ պաշարների կարգերի, մ		
		A	B	C ₁
2-րդ	2.1. Բոլոր ծագումնաբանական տիպերի խոշոր և միջին շերտային ու շերտաձև հանքավայրեր՝ օգտակար ստվարաշերտի ոչ կայուն կառուցվածքով (ոչ կոնդիցիոն ապարների նրբաշերտերով) և հզորությամբ կամ ավազի ու կոպճի փոփոխական որակով (տարբեր տեսակներն ու մակնիշները տարածականորեն չեն երկրաչափացվում)	-	100-200	200-300

Ընդ որում հաշվի առնելով օգտակար հանածոյի մարմնի մորֆոլոգիական ձևը և չափսերը, հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մինչև 8մ խորությամբ թվով 42 հետախուզահորերի միջոցով: Հետախուզահորերի կտրվածքը ընդունվում է 2.0մx2.0մ:

Հետախուզման ստորին հորիզոն է ընդունվել 840մ հորիզոնը:

Հետախուզական հորերի միջև հեռավորությունը կազմում է 50-270մ: Ինչպես արդեն նշվել է, ընտրված հետախուզացանցը թույլ կտա օգտակար հանածոյի հետախուզված պաշարները հաշվարկել արդյունաբերական B և C₁ կարգերով:

Օգտակար հանածոյի որակական հատկությունները պետք է ուսումնասիրվեն ըստ «Ավագ շինարարական աշխատանքների համար. Տեխնիկական պայմաններ» ԳՈՍՏ 8736-2014 և «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍՏ ԳՈՍՏ տեխնիկական պահանջների:

*Նախապատրաստական շրջան, ծրագրի կազմում,
կազմակերպում և լուծարում*

Մինչև նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմելը, անհրաժեշտ է ծանոթանալ ֆոնդային և հրատարակված նյութերին, ինչպես նաև գործող հրահանգներին և ԳՈՍՏ-երին:

Կատարողների աշխատանքի ծախսը կազմում է.

I կարգի երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս

տեխնիկ-երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս:

Ընդամենը՝ - 2 մարդ - 1 ամիս:

Նախագծի կազմում.

I կարգի երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս

տեխնիկ-երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս:

Ընդամենը՝ - 2 մարդ - 1 ամիս:

Կազմակերպում և լուծարում

Հանաձայն “Инструкция по составлению проектов и смет на геологораз — ведочные работы” հրահանգի պահանջների, աշխատանքների կազմակերպման ծախսերը կազմում են դաշտային աշխատանքների նախահաշվային արժեքի 1%-ը:

Դաշտային աշխատանքների ավարտից հետո նախատեսվում են լուծարման աշխատանքներ, որոնց ծախսերը կազմում են դաշտային աշխատանքների արժեքի 0.8%-ը:

Երկրաբանահանույթային աշխատանքներ

Հայցվող տարածքի կոորդինատները որոշվել են տեղանքում սերտիֆիկացված GPS սարքի կիրառմամբ ըստ WGS-84 ARMREF 02 համակարգի:

Երևակման տարածքի երկրաբանական կառուցվածքի ճշտման, քարտեզագրման նպատակով նախատեսվում է մոտ 43.0հա մակերեսով տարածքում կատարել երկրաբանահանույթային աշխատանքներ: Երևակման երկրաբանական քարտեզի կազմման համար անհրաժեշտ երկրաբանական երթուղիների ընդհանուր երկարությունը կկազմի մոտ 18կմ:

Հետախուզական փորվածքների անցում

Օգտակար հանածոյի մարմնի եզրագծման, ուսումնասիրման և նմուշարկման նպատակով նախատեսվում է հետախուզահորերի անցում: Այդ աշխատանքները կիրականացվեն մեխանիկական եղանակով՝ CAT մակնիշի էքսկավատորով V կարգի ամրության ապարներում: Նախատեսվում է 42 հետախուզահորերի անցում, որոնց առավելագույն խորությունը նախատեսվում է 8մ, կտրվածքը՝ 4.0մ², ընդհանուր ծավալը՝ 336զծ.մ կամ 1344մ³:

Հետախուզահորերի ծավալների նախնական բաշխումը ըստ տեղամասը կազմող ապարների տեսակների հետևյալն է.

- վերին չորրորդական-ժամանակակից ճահճային առաջացումներ – 12զծ.մ (№№ 2, 3, 4 և 5 հետախուզահորերում, միջինը 3մ հզորությամբ),
- Արաքսի հնահունի վերին չորրորդական-ժամանակակից առաջացումներ – 24զծ.մ (№№1, 11 և 37 հետախուզահորեր 8-ական զծ.մ խորությամբ),
- վերին չորրորդական առաջացումներ – 300զծ.մ (№№2, 3, 4 և 5 հետախուզահորերում 5մ խորությամբ, №№6, 7, 8, 9, 10, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 38, 39, 40, 41, 42 հորերում՝ 8մ խորությամբ):

Հետախուզահորերի անցման ժամանակ առաջանալու է մոտ 1344մ³ ծավալից մոտ 50.4մ³ հողաբուսական զանգված է (ավազակոպճի հետ խառնված գորշ ոռոգելի հողեր) և 1293.6մ³ ավազակուտակ:

Հետախուզական փորվածքների փաստագրում

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հետախուզահորերը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:50 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալը նախատեսվում է 336գժ.մ:

Ծավալային զանգվածի որոշում դաշտային պայմաններում

Նախատեսվում է հետախուզահորերի անցման ընթացքում, դաշտային պայմաններում երեք կետում որոշել բնամասում ավազակոպճային կուտակի բնական խտությունը, ծավալալիքային զանգվածը, ինչպես նաև հումքի փխրեցման գործակիցը:

Նմուշարկում

Տեղամասի ավազակոպճային կուտակը նախատեսվում է ուսումնասիրել որպես հումք շինարարական ավազի և խճի արտադրության համար:

Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է վերցնել նմուշներ հետախուզահորերից, կուտակի լրիվ հզորությամբ 40x40սմ կտրվածքով ակոսային նմուշների միջոցով: Ելնելով ավազներում կոպճային նյութի առկայության հնարավորությունից, մեծ կտրվածքով մեծազանգված նմուշները ապահովում են կուտակի հատիկաչափական կազմի բարձր հավաստիության տվյալների ստացումը: Ակոսային նմուշները նախատեսվում է վերցնել հետախուզական փորվածքների պատից՝ օգտակար կուտակի ամբողջ հզորությամբ:

Կախված ավազակոպճային կուտակի հզորությունից, ակոսների երկարությունը կարող է տատանվել մինչև 8մ:

Յուրաքանչյուր հետախուզական փորվածքում նմուշարկումը նախատեսվում է իրականացնել կուտակի լրիվ հզորությամբ, անհրաժեշտության դեպքում կկիրառվի հատվածամասերով (սեկցիաներով) նմուշարման եղանակը:

Նմուշների մշակումը նախատեսվում է կատարել հետևյալ կերպ. նմուշարկման ակոսից վերցված ամբողջ նյութը լցվելու է բրեզենտե փովածքի վրա, խառնվելու է և կրճատման եղանակով հասցվելու է 15կգ-ի, որն էլ կազմելու է շարքային նմուշի նյութը: Այն լցվելու է առանձին պարկերի մեջ, պիտակավորվելու է և ուղարկվելու է լաբորատորիա՝ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար:

Նախատեսվում է վերցնել 42 նմուշ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար, 3 նմուշ քիմիական անալիզների և 3 նմուշ միներալոգո-պետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար: Ակոսային նմուշներից կազմվելու է 2 տեխնոլոգիական նմուշ, որի հիման վրա կուսումնասիրվեն օգտակար կուտակից տարանջատված կոպճի և դրա ջարդման արդյունքում ստացված խճի ֆիզիկամեխանիկական հատկությունները: Լաբորատոր փորձարկումներին ուղարկվող նմուշների ընդհանուր ծավալը կկազմի մոտ 0.04մ³:

Նախատեսվում են նաև ռադիոմետրիական ուսումնասիրություններ՝ օգտակար հանածոյի ռադիացիոն-հիզիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով:

Տոպո-մարկշեյդերական աշխատանքներ

Բոլոր հետախուզական փորվածքները և երկրաբանական սահմանները տեղադրվելու/նշվելու են գործիքային կապակցմամբ:

Ինժեներա-երկրաբանական, հիդրոերկրաբանական

և ռադիոմետրիական ուսումնասիրություններ

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել տարածքի հեռանկարային շահագործման ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ, ավազակոպճային կուտակի ռադիոմետրիական հատկությունների պարզաբանում, որը կիրականացվի հետախուզական փորվածքների անցման ընթացքում կատարվելիք դիտարկումներով:

Անհրաժեշտության դեպքում վերոհիշյալ ուսումնասիրությունները կկատարվեն մասնագիտացված կազմակերպությունների հետ համագործակցելով:

Հետախուզական փորվածքների հետլցում

Նմուշարկման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է հետախուզահորերի անցման ժամանակ առաջացած 1293.56մ³ ծավալով

ավազակոպճային զանգվածի հետլցնում (1293.6մ³ լեռնային զանգվածից լաբորատոր փորձարկումների է ուղարկվում 0.04մ³ ծավալ), որի վրա փովելու է 50.4մ³-ը հողաբուսական շերտը: Աշխատանքները կկատարվեն մեխանիզացված եղանակով:

Հաշվետվության կազմման աշխատանոցային աշխատանքներ

Եղեգնուտի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքների և օգտակար հանածոյի լաբորատոր ուսումնասիրությունների ավարտից հետո կկատարվեն աշխատանոցային աշխատանքներ, որի ընթացքում.

- կամփոփվեն և կհամակարգվեն դաշտային փաստացի երկրաբանական նյութերը, լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքները,
- կտրվի տեղամասի երկրաբանատնտեսագիտական գնահատականը,
- կկատարվի օգտակար հանածոյի պաշարների հաշվարկը,
- կկազմվի երկրաբանական հաշվետվություն՝ տեղամասի երկրաբանատնտեսական գնահատմամբ և պաշարների հաշվարկմամբ:

Կազմված հաշվետվությունը կներկայացվի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան մասնագիտական ստորաբաժանման ղիտարկմանը:

Բեռների և ուղևորների փոխադրում

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բեռների փոխադրումը կկատարվի գոյություն ունեցող ասֆալտապատ և հողածածկ միջհամայնքային ճանապարհներով: Նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում: Աշխատանքները սպասարկելու է ընկերության բեռնատար մեքենայով: Տրանսպորտային ծախսերն ընդունվում են դաշտային աշխատանքների նախահաշվային արժեքի 10%-ի չափով:

Անձնակազմի տեղափոխումը կատարվելու է ընկերության մարդատար մեքենայով:

Սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատականը

Ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները իրականացվելու են Մեծամոր խոշորացված համայնքի Եղեգնուտ բնակավայրի վարչական տարածքում:

Հայցվող տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացումը որոշակի ազդեցություն կունենա նաև ազդակիր համայնքի մարդկանց կյանքի և պայմանների վրա:

Աշխատանքների թափանցիկությունն ու համայնքների իրազեկվածությունն ապահովելու նպատակով՝ «ՄԱՈՒՆԹԻՆ ՔԸՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, իրականացվելու են հանրային լսումներ և քննարկում, որոնց ընթացքում դիտարկվելու են համայնքներին աջակցության հնարավոր միջոցառումները:

Համայնքների նպատակային աջակցության միջոցառումներ մշակելու նպատակով աշխատանքն իրականացվելու է համայնքապետարանի հետ՝ պարզելու համար առաջնային լուծում պահանջող սոցիալական խնդիրները: Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում համայնքապետարանի հետ համաձայնեցված իրականացվելու են սոցիալական աջակցության ծրագրեր: Կատարվելու է ելակետային պայմանների հավաքագրում:

Սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրերը պիտի միտված մի շարք խնդիրների լուծմանը, մասնավորապես.

- նոր աշխատատեղերի ստեղծում: Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում բազմաթիվ օժանդակ աշխատանքների (օրինակ՝ վարորդներ, տեխնիկական ջրի մատակարարում, աշխատակիցներին սննդի մատակարարում և այլն) իրականացման համար հատուկ մասնագիտական կրթություն չի պահանջվում: Հետևաբար, այդ աշխատանքներին ներգրավվելու են ազդակիր համայնքների բնակիչները, ինչը կստեղծի բնակիչների զբաղվածություն և լրացուցիչ եկամուտ ընտանիքների համար: Միաժամանակ, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնող անձնակազմի սննդի ապահովման նպատակով գնումներ են կատարվելու հենց համայնքներում, ինչը նույնպես դրական ազդեցություն է ունենալու ապրանքաշրջանառության ծավալի, տեղական արտադրանքի սպառման շուկայի վրա:
- համայնքների տնտեսական ուղղվածության շրջանակներում՝ նոր, ընդերքօգտագործման հետ չկապակցված արտադրանքի ստեղծման շղթայի մշակում և ներդրում: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների

Ժամանակ նախատեսվում է կատարել կենսաբազմազանության, այդ թվում բուսական ծածկույթի դիտարկում, ուսումնասիրություն՝ համապատասխան որակավորում ունեցող մասնագետների մասնակցությամբ: Առանձնահատուկ ուշադրություն է նախատեսվում դարձնել դեղաբույսերի տեսակի և տարածման արեալների վրա: Հետազոտվելու են նաև տարածքում աճող ուտելի և համեմունքային բույսերը, ստացված տեղեկատվությունը ներկայացվելու է համայնքներին՝ որպես արտադրական նոր շղթաների ձևավորման ելակետային տվյալ:

Միաժամանակ, «ՄԱՈՒՆԹԻՆ ՔԸՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊ ընկերությունը նախատեսում է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցությունների ամբողջական մշտադիտարկում՝ համայնքների բնակիչների, դրանց կենսապայմանների վրա ցանկացած բացասական ազդեցությունների վերահսկման և կանխարգելման նպատակով:

Աշխատանքների ժամանակ ժամանակավորապես օգտագործումից դուրս եկած հողերի ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 168մ² կամ 0.0168: Հողօգտագործման համար վնասի փոխհատուցման գումարը համայնքին կկազմի 0.0168հա x 3500000 = 58800դրամ:

▪ ***Նախագծման նորմատիվ-իրավական հենքը***

Օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

– ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

– ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

– «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

– «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

– «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.) – կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

– «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

– «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ընդ. ՀՕ-110, 21.06.2014թ., խմբ. 03.05.23թ. ՀՕ-150-Ն), որը կարգավորում է ՀՀ-ում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

– «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-159-Ն, 24.11.2004թ.-ի), որով կարգավորվում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

– ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:

– ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման,

հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

– ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

– ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

– ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

– ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:

– ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,

– ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,

– ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի,

– ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ՀՀ ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը,

– ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները,

– ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ.-ի N369-Ն հրաման, որով հաստատվել են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները:

– ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N675-Ն որոշում, որով սահմանվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների բովանդակությունը, ինչպես նաև ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման միջոցառումները:

– ՀՀ կառավարության 17.08.2017թ.-ի N990-Ն որոշում, որով սահմանվել են ֆինանսական երաշխիքի բովանդակությունը և դրան ներկայացվող չափորոշիչները, դրանց ներկայացվող որակական չափանիշների գնահատման, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի հաշվարկման կարգը:

– ՀՀ կառավարության 11.10.2021թ.-ի N1848-Ն որոշում, որով հաստատվել է ստատել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի, ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում՝ կենսաբանական վերականգնման ուղեցույցը:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

- **Ռեյիեֆ, երկրաձևաբանություն, սեյսմիկ բնութագիր, սողանքներ**

Երկրաձևաբանական տեսակետից Եղեգնուտի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի տարածքը գտնվում է Արարատյան դաշտի արևմտյան մասում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից դաշտավայրի այդ մասը ներկայացնում է թույլ ալիքաձև ենթահորիզոնական հարթավայրով:

Տարածքի երկրաձևաբանական և լանջերի թեքության սխեմատիկ քարտեզները ներկայացվում են ստորև նկար 7-8-ում:

Արարատյան դաշտը միջլեռնային գոգավորություն է, եզրավորված հարավից՝ Փոքր ու Մեծ Արարատ լեռնագագաթներով և դեպի արևմուտք ձգվող Հայկական պար լեռնաշղթայով, հյուսիսից՝ Արագածի, Արա լեռան գանգվածներով և Ծաղկունյաց լեռնաշղթայով, արևելքից՝ Գեղամա, Երանոսի, Շեկասարի և Ուրցի լեռնաշղթաներով, արևմուտքում գոգավորությունը հարում է Կարսի սարահարթին:

Արարատյան դաշտն ունի բարդ տեկտոնական կառուցվածք: Տեկտոնական տեսակետից այն իրենից ներկայացնում է Արաքսի տեկտոնական գոտու վերադիր միջլեռնային ձկվածք: ձկվածքի սահմաններում հետծալքավորման հետևանքով առանձնացվում են արևմուտքից արևելք տարածված հետևյալ երկրորդ կարգի հիդրոերկրաբանական կառուցվածքները՝ Արմավիրի իջվածք, Սովետաշենի (Նուբարաշենի) բարձրացում, Արտաշատի իջվածք, Խոր Վիրապի բարձրացում, Արագոյանի (Երասխի) իջվածք, Գայլի-Դոների (Դարպասի) բարձրացում, որին դեպի արևելք հերթափոխում է Նախիջևանի ընդարձակ գոգավորությունը: Դաշտի երկրաբանական կառուցվածքի վերին հարկը կամ այսպես կոչված ծածկույթը, որը ունի շուրջ 500մ հաստություն ներկայացված է չորրորդական հասակի լճագետային նստվածքներով և հրաբխային անդեզիտա-բազալտային լավաներով:

Տեղամասի տարածքը գտնվում է Մերձարաքսյան գոտում: Մերձարաքսյան գոտին պալեոգոյում բնութագրվել է պարապլատֆորմային զարգացման ռեժիմով: Ալպյան տեկտոնական ցիկլում, նրա հարավային կեսում գոյություն է ունեցել պարագետսինկլինալային ռեժիմ, իսկ հյուսիսային կեսում ետեվգետսինկլինալային ռեժիմ:

Մերձարաքսյան գոտու կառուցվածքում մասնակցում են միջին-վերին պալեոզոյի ու տրիասի պարապլատֆորմային տիպի տերիզեն, կարբոնատային, տուֆանստվածքային և կայծքարահրաբխածին, հրաբխածին առաջացումները:


Տարածքում արտածին երկրաբանական երևույթների վերաբերյալ տեղեկատվության հիմք է հանդիսանում Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագիրը (Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005):

Սողանքային երևույթներ Հարավ-արևելյան տեղամասի տարածքում չեն արձանագրվել, ինչը պայմանավորված է երկրաձևաբանական առանձնահատկություններով և տարածքի գրեթե հորիզոնական տեղադրմամբ (ընդհանուր մեղմաթեք անկում):

Մոտակա հայտնի սողանքային մարմինը քարտեզագրվել է հանքավայրի տարածքից մոտ 16.3կմ հեռավորության վրա՝ ՀՀ Արագածոտնի մարզի Նոր Եղեսիա բնակավայրից մոտ 1.3կմ հյուսիս- արևելք (նկար 9):

Ավազակոպճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքի սեյսմիկ պայմանների բնութագրումը կատարվել է ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի: Համաձայն դրա՝ տեղամասը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի սպասվելիք արագացումների մեծությունը (արտահայտված ազատ անկման g արագացման մասերով) կազմում է 0.3 g (նկար 10):

ՏԱՐԱԾՔԻ ՍԽԵՄԱՏԻԿ ԵՐԿՐԱԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1 - Ներլեռնային ցածր /700-1000մ/ ենթահորիզոնական, մասամբ դարավանդավորված հարթավայրեր

Նկար 7.

ՏԱՐԱԾՔԻ ԼԱՆՁԵՐԻ ԹԵՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1 - Հարթավայրեր և մեղմաթեք հարթավայրեր /0-9 աստիճան ընդհանուր թեքությամբ/

Նկար 8.

- **Եղեգնուտի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի շրջանի կլիման** խիստ ցամաքային է (նկար 11): Տարածքը գտնվում է Հարավային Կովկասի առավել չորային շրջաններից մեկում:



Նկար 11.

Տարածքի կլիմայական բնութագրերը ներկայացվում են ըստ մոտակա Արմավիր օդերևութաբանական կայանների տվյալների (870մ): Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը գրանցվել է -31°C , բացարձակ առավելագույնը՝ 41°C : Ըստ օդերևութաբանական կայանի տվյալների՝ ձնածածկույթի առավելագույն տասնօրյակային բարձրությունը կազմել է 42սմ, տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը՝ 38, ձյան մեջ ջրի առավելագույն քանակը՝ 92մմ: Արարատյան դաշտավայրի և շրջակա լեռնաշղթաների միջև ջերմային կոնտրաստները առաջացնում են լեռնադաշտավայրային ուժեղ քամիներ, հատկապես ամռանը, իսկ ձմռանը հարթավայրի սահմաններում դիտվում է թույլ քամիներ առանց հողմի:

Աղյուսակ 3.

Օդի միջին ջերմաստիճանը

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարի
-4.2	1.6	4.9	12.4	17.4	21.6	25.7	21.1	20.0	12.9	5.7	-0.9	11.6

Մթնոլորտային տեղումների քանակները ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4.

Մթնոլորտային տեղումները

Ըստ ամիսների միջին ամսական/առավելագույն օրական												Տարեկան գումար.
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
18	19	25	32	44	26	12	9	11	25	23	16	260
19	21	26	37	42	21	38	31	35	30	30	20	42

Քամիների բնութագրերը ներկայացվում են աղյուսակ 5-6-ում:

Աղյուսակ 5.

Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, հՊա	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ							
		Ուղղությունները							
		Հս	Հս-Արլ	Արլ	Հվ-Արլ	Հվ	Հվ-Արմ	Արմ	Հս-Արմ
917.0	հունվար	7	5	17	8	9	8	28	18
		2.2	2.2	1.9	1.9	1.8	2.3	2.5	2.8
	ապրիլ	5	7	28	11	9	9	20	11
		2.8	3.4	2.5	2.7	2.7	3.7	3.0	3.7
	հուլիս	3	8	31	16	11	7	16	8
		2.1	2.5	1.9	2.2	1.1	2.6	2.7	2.6
	հոկտեմբեր	5	4	23	16	9	7	22	14
		2.2	2.8	1.9	2.9	2.8	3.6	3.1	3.8

Աղյուսակ 6.

Ամիսներ	Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥ 15 մ/վ օրերի քանակը)	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը Հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում		
հունվար	77	0.5	0.9	12	20	23	24
ապրիլ	52	1.3					
հուլիս	55	1.1					
հոկտեմբեր	72	0.6					

Օդի միջին հարաբերական խոնավությունը ըստ ամիսների ներկայացված է աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7.

Ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժամը 15-ին	
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամսացուրտ ամսվա	ամենաշոգ ամսվա
76	72	62	56	57	51	48	49	53	65	74	78	62	62	29

▪ **Մթնոլորտային օդ**

Մթնոլորտային օդի որակի մշտադիտարկման կայան, որտեղ կատարվում է կանոնակարգված պարբերական մոնիթորինգ, Եղեգնուտի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի շրջանում չկա:

Տեղամասի ենթաշրջանը բացառապես գյուղատնտեսական է: Տարածքում չկան մթնոլորտային օդի աղտոտման աղբյուր հանդիսացող գործող խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, Հարավ-արևելյան տեղամասից 0.6-0.7կմ հյուսիս անցնող S-3-50 տեղական նշանակության ճանապարհների ծանրաբեռնվածությունը գնահատվում է թույլից-չափավոր:

Որոշակի պատկերացում տարածքի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ նաև հաշվարկային եղանակով: Դրա համար ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ (ներկայումս ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ) կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, ուր ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից (աղյուսակ 8):

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքին մոտ գտնվող գյուղերում մշտական բնակչությունը ըստ պաշտոնական տվյալների չի գերազանցում 10000 մարդ:

Բնակչության քանակը (հազ.)	Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0.4	0.05	0.03	1.5
10 - 50	0.3	0.05	0.015	0.8
< 10	0.2	0.02	0.008	0.4

Հետևաբար, տեղամասի տարածքի համար որպես մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցամիջ պետք է ընդունել. փոշի 0.2մգ/մ³, ծծմբի երկօքսիդ 0.02 մգ/մ³, ազոտի երկօքսիդ 0.008մգ/մ³ և ածխածնի օքսիդ 0.4մգ/մ³:

Հարավ-արևելյան տեղամասի տարածքում 2023 թվականի հոկտեմբերի առաջին տասնօրյակում կատարվել է մթնոլորտային օդի որակի ուսումնասիրություն ավտոմատ չափիչ սարքով: Մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիան կազմում է 0.09մգ/մ³, ծծմբի երկօքսիդինը՝ 0.008մգ/մ³, ազոտի երկօքսիդինը՝ 0.006մգ/մ³:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բնապահպանական միջոցառումների կառավարման պլանը կազմելիս որպես սահմանանիշ կարող են ընդունվել նաև ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն հրամանի հավելված 1-ով ամրագրված նորմատիվները:

Ըստ նշված փաստաթղթի բնակավայրերում անօրգանական փոշու (SiO₂ պարունակությունը 70% և ավելի) առավելագույն միանվագ ՄԹԿ կազմում է 0.15մգ/մ³, միջին օրեկան ՄԹԿ՝ 0.05մգ/մ³:

▪ **Ջրային ռեսուրսներ**

Եղեգնուտի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի շրջանը գրեթե զուրկ է բնական մակերևույթային հոսքերից:

Տեղամասից մոտ 4.37-4.7կմ դեպի հարավ հոսում է Արաքս գետը (նկար 12): Արաքս գետի վրա եղած 4 հիդրոլոգիական դիտարկման կետերի 5-7 տարիների դիտարկման տվյալները ցույց են տվել, որ Արաքս գետը հանքավայրի շրջանում բնութագրվում է տարվա մեջ մեկ՝ գարնանային վարարումով, որն սկսվում է մարտի 15-20-ից և ավարտվում է հունիսի 15-30-ին՝ տևելով շուրջ 90-103 օր: Այս շրջանում ջրի ծախսը կազմում է միջինը 1690մ³/վրկ:

Ջրային ռեսուրսների բաշխման սխեմատիկ քարտեզ



Նկար 12.


Ջրի առավելագույն նվազումը տեղի է ունենում օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, երբ ջրի ծախսը նվազում է մինչև $16.6 \text{ մ}^3/\text{վրկ}$: Տարեկան ջրի միջին ծախսը կազմում է $167 \text{ մ}^3/\text{վրկ}$: Ջրի միջին տարեկան ծախսը կազմում է $86.2 \text{ մ}^3/\text{վրկ}$:

Արաքս գետը սկիզբ է առնում Բյուրակն հրաբխային բարձրավանդակից (մոտ 3000մ բարձրությունից), մինչև Արարատյան դաշտ մտնելը հոսում է նեղ կիճերով, տեղ-տեղ՝ լայնացված հովտով, ունի մեծ անկում: Գետի երկարությունը 1720կմ է, ավազանը՝ 102 հազ. կմ^2 :

Նղեգնուտի ԱԿԽ հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի շրջանում Արաքս գետի վտակներ չկան, գետի ջրերի մոնիթորինգ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից չի իրականացվում (նկար 13):

- **Հողեր**

Եղեգնուտի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի շրջանում տարածված են ոռոգելի գորշ մնացորդային կավային հողերը, ինչպես նաև թերի զարգացած աղուտ-ալկալի հողերի և հիմքի արմատական ապարների համալիրները (նկար 14):



Նկար 14.

Գորշ ոռոգելի հողերը ձևավորվել են Արարատյան հարթավայրի բնահողային շրջանում՝ Արաքս գետի և նրա ձախակողմյան վտակների բերվածքների վրա, մարդու ներգործության պայմաններում: Այն հատվածներում, որտեղ հանքայնացված խորքային ջրերը մոտ են մակերեսին, առաջացել են նաև հիդրոմորֆ աղուտ-ալկալի հողեր:

Այս հողերը տարածված են Արարատյան հարթավայրի համեմատաբար ցածրադիր թույլ թեք հարթություններում:

Գորշ ոռոգելի հողերում հողագոյացնող պրոցեսներն ընթացել են հիդրոմորֆ ռեժիմի պայմաններում: Հումուսի քանակը կազմում է 3-3.5% :

Դրանց քիմիական հատկությունները ներկայացված են աղյուսակ 9-ում :

Աղյուսակ 9.

Հողի տիպը և ենթատիպը	Խորությունը, սմ	Հումուս, %	CO ₂ , %	Կլանված հումքերի գումարը, մ.էկվ. 100գ հողում	Դի-ը ջրային լուծված ռյուսթոմիշմթ
Մարգագետնային գորշ ոռոգելի	0-21	1.8	6.0	26.8	8.4
	21-43	1.6	6.3	28.0	8.4
	43-65	0.9	7.9	31.9	9.0
	65-92	0.8	6.8	22.0	9.4
	92-182	0.9	6.8	36.8	9.5

Ոռոգելի հողերի պրոֆիլում պարզորոշ առանձնացվում է մակերեսային աղային հորիզոններ, որտեղ հեշտ լուծվող աղերի քանակը 1.3% և ավելի է, սակայն դեպի ստորին շերտերը դրա պարունակությունը նվազում է:


Հարավ-արևելյան տեղամասի տարածքում գորշ ոռոգելի հողերի հզորությունը տատանվում է 0.1-0.3մ սահմաններում: Հողային ծածկույթից 2023թ. հոկտեմբերին կատարվել է նմուշառում: 2 նմուշների վերլուծության արդյունքում ստացվել են հետևյալ միջինացված ցուցանիշները. սիլիցիում- 1113613մգ/կգ, մանգան-821մգ/կգ, ֆոսֆոր-103մգ/կգ, պղինձ-0.09մգ/կգ, նիկել-0.051մգ/կգ և ցինկ-7.2մգ/կգ: Հայցվող տեղամասում խախտված/վերականգնված հողեր, պահեստավորված հողաբուսական շերտ չկա:

• **Բուսական և կենդանական աշխարհ**

Եղեգնուտի հանքավայրի, դրա Հարավ-արևելյան տեղամասի շրջանի բուսականությունը ներկայացված է համեմատաբար երիտասարդ, ստորին չորրորդական դարաշրջանից ՀՀ տարածքում ի հայտ եկած աղասեր անապատային բուսատեսակներով (նկար 15):

Տարածքում նշվել են գարի մանուշակագույն (*Hordeum violaceum*), օշան հավամրգանման (*Salsola ericoides* Bieb.), անցողունիկ հեռացած (*Puccinellia distans*), սեզ սողացողը (*Elytrigia repens*), սեզախոտ անապատային (*Agropyron desertorum*), հազարատերևուկ նեղատերև (*Achillea tenuifolia*), անապատասեզ հեռացած (*Eremopyrum distans*), դաշտավլուկ սոխուկային (*Poa bulbosa*), օշինդր բուրավետը

(*Artemisia fragrans* Willd.), լվածադիկ արծաթատերևը (*Tanacetum argyrophyllum* C. Koch. Tzvel.), հետերանթելիում մազակիր (*Heterantheium piliferum*), փշոտ կապարը (*Capparis*) և սովորական եղեգը (*Phragmites communis*), որն աճում է խոնավ հատվածներում:



Նկար 15.


Հայցվող տարածքը ուսումնասիրվել է երթուղիներով՝ ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելու նպատակով: Ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշման, շրջանում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ բուսատեսակները.

- օշան Թամամշյանի (*Salsola tamamschjanae* Iljin) – վտանգված տեսակ, հայտնի է մեկ մասնատված պոպուլյացիա: Հայտնի է Արմավիր քաղաքի շրջակայքում, հայցվող տարածքից մոտ 10կմ հեռավորության վրա: Աճում է ստորին լեռնային գոտում, ծ.մ. 700-1000մ բարձրության վրա, անապատում-կիսաանապատում: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում;

- օշան թաղիքային (*Salsola tomentosa* (Moq.) Spach) – վտանգված տեսակ, հանդիպում է Երևանի ֆլորիստիկ շրջանում (Արմավիր քաղաքի շրջակայք, հայցվող տարածքից մոտ 10կմ հեռավորության վրա): Աճում է ստորին լեռնային գոտում, ծ.մ. 800-1200մ բարձրությունների վրա, քարքարոտ գիպսակիր, կավային լանջերին, կիսաանապատներում: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում;

- սֆերոֆիզա աղուտային (*Spaerophysa salsula* DC.) – խոցելի տեսակ, հայտնի են երկու տարանջատված պոպուլյացիա, որոնց մակերեսը 500ք.կմ-ից պակաս է: Հայտնի է Արմավիր քաղաքի շրջակայքում, հայցվող տարածքից մոտ 10կմ հեռավորության վրա: Աճում է ստորին լեռնային գոտում, ծ.մ. 800-900մ բարձրության վրա, աղակալած ճահիճներում:

- սարսազան կոնաձև (*Halocnemum strobilaceum*) – վտանգված տեսակ, Աճում է Երևանի ֆլորիստիկական շրջանում (Արագած, Մարգարա, Երասխահուն, Էջմիածին, Երասխ):



ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված, հայցվող տարածքի շրջանում հայտնի վերը նշված տեսակները Եղեգնուտի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի տարածքում չեն դիտարկվել:

Հայցվող տեղամասի շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է տափաստանային-անապատային լանդշաֆտներին բնորոշ, հանրապետության տարածքում լայն տարածում ունեցող կենդանական ձևերով: Հարակից շրջանների ջրային տարածքում ճպուռներից դիտարկվել են *Agrion splendens*, *Lestes Barbara* և *Ischnura elegans*, թերթիկաբեղավորներից՝ *Scarabeus pius* Illiger, *Geotrupes stercorarius* (Linne), *Platytomus variolosus* Kolenati, *Aphodius subterraneus* (Linne) և *Onthophagus amyntas* (Olivier): Կարածրաթևերից նշվել է *Mylabris fusca* Olivier, *Omophlus flavipennis* Kuster, *Exochomus melanocephalus* (Zubkov): Սողուններից դիտարկվել է *Ophisops*

elegans Menetr., *Eremias strauchii* Kessler., հարակից գյուղերի բնակիչների վկայությամբ հանդիպում է ջրային լորտու (*Natrix tessellata*), մեր կողմից հայցվող տարածքում չի դիտարկվել: Բազմաթիվ են դաշտամկները (*Microtus arvalis*):

Հարավ-արևելյան տեղամասի շրջանում ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներից հայտնի են՝

- ակրամովսկու շադինիա (*Shadinia akramovskii*) – սահմափակ արեալով և կտրտված ապրելավայրով հազվագյուտ տեսակ է, գնահատված է որպես «կրիտիկական վիճակում գտնվող»: Հայտնի են Սև ջուր գետի ակունքներում՝ Առատաշեն գյուղի մոտակայքում, հայցվող տարածքից մոտ 8.5կմ հեռավորության վրա;

- Վան բրինկի նետիկ (*Coenagrion vanbrinkae* Lohmann) – հազվագյուտ տեսակ, գնահատվել է որպես «խոցելի»: Հայտնի է Տարոնիկ գյուղի մոտ, հայցվող տարածքից մոտ 6.5կմ հեռավորության վրա;

- Լինդենի նետիկ (*Erythromma lindeni*) - սահմափակ արեալով ծայրահեղ հազվագյուտ տեսակ է, գնահատված է որպես «վտանգված»: Հայտնի է Տարոնիկ գյուղի մոտ, հայցվող տարածքից մոտ 6.5կմ հեռավորության վրա;

- ծովային քարադր (*Charadrius alexandrinus*) – հազվագյուտ տեսակ է խիստ սահմանափակ արեալով, հայտնի է Արմավիր քաղաքի շրջակայքում, հայցվող տեղամասից մոտ 10կմ հեռավորության վրա;

- մարգագետնային ծիծառակոցար (*Glareola pratincola*) – հազվագյուտ տեսակ է, հայտնի է Տարոնիկ գյուղի մոտ, հայցվող տարածքից մոտ 6.5կմ հեռավորության վրա;

- կոցար-կաչաղակ (*Haematopus ostralegus* Linnaeus) – հազվագյուտ, սակավաթիվ տեսակ: 30-40-ականների տվյալներով՝ Հայաստանում հանդիպել է ամենուրեք: 50-ականներին եզակի առանձնյակներ նկատվել են Սևանա լճի ջրավազանում և Արաքս գետի հովտում: Ներկայումս՝ չվահյուր Սևանա լճի ջրավազանում և Արաքս գետի հովտում :

ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված, հայցվող տարածքի շրջանում հայտնի, վերը նշված կենդանական տեսակները Եղեգնուտի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի տարածքում չեն հայտնաբերվել:

▪ **Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Եղեգնուտի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում : Բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան նաև հայցվող տեղամասին հարակից մասերում: Արմավիրի մարզում է գտնվում «Որդան կարմիր» պետական արգելավայրը, որը զբաղեցնում է 219.85 հեկտար տարածք, բաղկացած է երկու առանձին տեղամասերից՝ Արագափի գյուղական համայնքի հյուսիս-արևմտյան մասում (198.33 հեկտար) և Ջրառատի գյուղական համայնքի հյուսիսային մասում (21.52 հեկտար)՝ Արարատյան հարթավայրում, ծովի մակերևույթից 835-850 մետր բարձրության վրա:

Արգելավայրի հիմնական խնդիրներն են՝

ա) արգելավայրի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովումն ու պահպանությունը.

բ) Արարատյան հարթավայրի աղուտային (հալոֆիտ) ցուցանմուշային էկոհամակարգերի էկոլոգիական հավասարակշռության, այդ թվում՝ ջրային ռեժիմի պահպանությունը.

գ) արգելավայրի վայրի բուսական և կենդանական աշխարհի էկոլոգիական միջավայրի պահպանությունը.

դ) հազվագյուտ ու անհետացման վտանգի տակ գտնվող բույսերի և կենդանիների տեսակների պահպանությունն ու վերարտադրությունը.

ե) գիտաճանաչողական և էկոլոգիական զբոսաշրջություն իրականացնելու համար անհրաժեշտ նախադրյալների ապահովումը:

Արգելավայրի Արագափ տեղամասը գտնվում է հայցվող տարածքից մոտ 920-1070մ (նկար 16), Ջրառատի տեղամասը՝ մոտ 9.7կմ հեռավորությունների վրա:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են համարվում նաև բնության հուշարձանները: Բնության հուշարձաններից Արմավիրի մարզում են գտնվում.

Աղյուսակ 10.

Անվանումը	Գտնվելու վայրը	Հեռավորությունը հայցվող տարածքից
«Մեծամոր» լիճ (ջրագրական հուշարձան) և Մեծամոր լճի ջրաճահճային բուսականություն (կենսաբանական հուշարձան)	Արմավիրի մարզ, Տարոնիկ գյուղից մոտ 3 կմ հս-արմ	Մոտ 6.5կմ

1	2	3
«Ավազասեր (պսամոֆիլ) բուսականություն»	Արմավիրի մարզ, քաղ. Վաղարշապատ, Զվարթնոց տաճարի մոտ	Մոտ 18կմ



Նկար 16.

Հայցվող տարածքի և բնության հուշարձանների տեղադիրքերը ներկայացված են նկար 17-ում:



Նկար 17.

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

- **Ենթակառուցվածքներ**

Եղեգնուտի հանքավայրը, դրա Հարավ-արեւելյան տեղամասը վարչական տեսակետից գտնվում է ՀՀ Արմավիրի մարզում:

ՀՀ Արմավիրի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևմտյան հատվածում: Մարզկենտրոնը Արմավիր քաղաքն է, որի հեռավորությունը Երևանից 48կմ է: Մարզն ունի 3 քաղաքային (Արմավիր, Վաղարշապատ, Մեծամոր) և 94 գյուղական համայնքներ: Համայնքներից 7-ը սահմանամերձ են: Մարզը արևմուտքից և հարավից սահմանակից է Թուրքիային, հյուսիսում սահմանակից է ՀՀ Արագածոտնի մարզին, արևելքից՝ Երևանին և ՀՀ Արարատի մարզին: ՀՀ պետական սահմանից մարզին բաժին է ընկնում 130.5 կմ հատված:

Մարզի մշտական բնակչության քանակը 01.01.2023թ.-ի դրությամբ կազմել է 267.2հազ.մարդ, որից քաղաքային բնակչությունը՝ 83.0հազ.մարդ, գյուղականը՝ 184.2հազ.մարդ:

Մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալը ընթացիկ գներով կազմել է 122516.0,մլն.դրամ, պատրաստի արտադրանքի իրացման ծավալը՝ 123953.0հազ.դրամ, արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը՝ 115.4%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը ըստ արտադրության բաժինների բաշխված է հետևյալ կերպ.

- հանքագործական արդյունաբերություն – 918.7մլն.դրամ,
- մշակող արդյունաբերություն – 84352.9մլն.դրամ,
- էլեկտրաէներգիայի, գաի, ջրի արտադրություն և բաշխում – 36002.2մլն.դրամ,
- ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում – 1242.2մլն.դրամ:

Գյուղատնտեսական համախառն արտադրանքը կազմել է 181.0մլրդ.դրամ, այդ թվում բուսաբուծություն 133.3մլրդ.դրամ, անասնաբուծություն՝ 47.7մլրդ.դրամ:

Հացահատիկային և հատիկաբերող բույսերի մշակաբույսերի ցանքատարածությունները զբաղեցրել են 4267հա, բերքատվությունը՝ 41.1ց/հա, համախառն բերքը 18.0հազ.տ: Կարտոֆիլի մշակման համար նույն ցուցանիշները կազմել են

համապատասխանաբար 1182հա, 389.5g/հա, 46.6հազ.տ: Ստորև, աղյուսակ 11-ում ներկայացված են տվյալներ բանջարանոցային և բոստանային մշակաբույսերի, պտղի, հատապտղի ու խաղողի, աղյուսակ 12-ում՝ տվյալներ գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի, իսկ աղյուսակ 13-ում՝ անասնաբուծական հիմնական արտադրանքի վերաբերյալ:

Աղյուսակ 11.

	Ցանքատարածությունները, հա	Բերքատվությունը, g/հա	Համառառն բերքը, հազ.տ
Բանջարանոցային մշակաբույսեր	8661	336.6	345.7
Բոստանային մշակաբույսեր	2804	309.5	86.7
Պտուղ և հատապտուղ	10422	103.4	82.6
Խաղողի տնկարկներ	7401	188.2	121.3

Աղյուսակ 12.

հազ.գլուխ	Խոշոր եղջրավոր	Որից՝ կովեր	Խոզեր	Ոչխարներ և այծեր	Չիեր
Արմավիր	57.6	17.5	21.4	140.2	0.1

Աղյուսակ 13.

	Իրացվել է գյուղ.կենդանի և թռչուն սպանդի համար, հազ.տոննա	Կաթ, հազ.տ	Ձու, մլն.հատ	Բուրդ, տոննա
Արմավիր	20.7	39.7	178.6	213.1

Իրականացվել են 23228.1մլն.դրամի շինարարական և 10322.8մլն.դրամի՝ շինմոնտաժային աշխատանքներ :

Գործարկվել է 2139մ² բնակելի շենք և 746 աշակերտական տեղով հանրակրթական ուսումնական հաստատություն :

Արմավիրի մարզում ներկայումս գործում են նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող 6 ուսումնական հաստատություններ՝ Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ, Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ, Արմավիրի արվեստի պետական քոլեջ, Էջմիածնի պետական քոլեջ, Արմավիրի բժշկական քոլեջ և Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան:

Մարզում առկա է համայնքային ենթակայության 85 մշակույթի տուն, որից Արմավիրի տարածաշրջանում՝ 38, Էջմիածնի տարածաշրջանում՝ 40, Բաղրամյանի տարածաշրջանում՝ 7: Մշակույթի տներից լիարժեք գործում են 16-ը:

Գրադարանային ֆոնդը կազմում է 1161830 կտոր գիրք՝ ՀՀ մշակույթի նախարարության, Հայաստանի գրողների միության, «Գիրք» հիմնադրամի, «Արևիկ» հրատարակչության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից կատարված նվիրաբերությունների շնորհիվ:

Գործում է 9 թանգարան. Մարդարապատի հուշահամալիր-Հայաստանի ազգագրության և ազգային ազատագրական պայքարի պատմության պետական թանգարան, Մուսալեռի հուշահամալիր-թանգարան, Զվարթնոց պատմաճարտարապետական արգելոց-թանգարան, Էջմիածնի գավառագիտական թանգարան, Էջմիածնի Խորեն Տեր-Հարությանի անվան թանգարան, Էջմիածնի Հովհաննես Հովհաննիսյանի տուն-թանգարան, Մեծամորի պատմահնագիտական թանգարան, Մհեր Աբեղյանի անվան թանգարան, Բաղրամյանի «Արաբոյի և ֆիդայիների հայրենասիրական թանգարան», որոնց հավաքածուները պարբերաբար համալրվում են նոր թանգարանային նմուշներով՝ հնագիտական նոր նյութերի և անհատների կողմից կատարած նվիրաբերությունների շնորհիվ:

Մարզում գործում է 9 մարզադպրոց, ինչպես նաև նշված մարզադպրոցների մասնաճյուղեր մարզի տարբեր համայնքներում: Համայնքային ենթակայության մարզադպրոցներում գործում են 92 խմբեր՝ 13 մարզաձևերից: Արտադպրոցական և արտադասարանական մարզական խմբերի պարապմունքներում ընդգրկված են դպրոցահասակ երեխաների 30-40%-ը: Մարզի հանրակրթական դպրոցներում և համայնքներում գործում են 189 խմբեր՝ 20 մարզաձևերից: Արմավիրի մարզում մարզպետարանի ենթակայությամբ գործող մարզադպրոցներ չկան: գործում են 61

առողջապահական հիմնարկներ, որոնցից 7-ը՝ մարզպետարանի ենթակայության, այդ թվում՝ բժշկական կենտրոններ - 2 (Արմավիր, Մեծամոր), հիվանդանոց - 1 (Վաղարշապատ), ծննդատուն - 1 (Վաղարշապատ), պոլիկլինիկա - 2 (Վաղարշապատ, Բաղրամյան), արյան փոխներարկման կայան - 1 (Արմավիր): Համայնքային ենթակայության թվով 52 «Գյուղական բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ-ներ ընդգրկում են 43 բուժական կաբարձական կետեր:

▪ **Հողերի տնտեսական յուրացման բնութագիր**

Եղեգնուտի ավազակույճային խառնուրդի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասը գտնվում է Մեծամոր խոշորացված համայնքի Եղեգնուտ բնակավայրի սահմաններում: Գյուղի պատմական անվանումներն են Բադալ, Ղամիշլու, Մուլա Բադա, Ռահիմաբադ, Սեֆիաբատ: Անվանվել է Եղեգնուտ 1946 թվականի ապրիլի 4-ին: Բնակչության մեծ մասը գաղթել է Արևմտյան հայաստանի Ալաշկերտ, Վան և Մուշ գավառներից:

Գյուղում գործում է հանրակրթական դպրոց, նախադրպոցական հաստատություն, գրադարան:

Համաձայն Մեծամոր համայնքի հնգամյա զարգացման ծրագրի՝ Եղեգնուտ բնակավայրի բնակչության կազմը ներկայացված է հետևյալ կերպ.

Աղյուսակ 14.

Տղամարդիկ	Կանայք	Թոշակատու	Տեղահանված	Միակողմանի ծնողազուրկ	Երկկողմանի ծնողազուրկ	Հաշվանդամ	Ընտանեկան նպաստի համակարգում գրանցված ընտանիքներ	Զոհվածների ընտանիքներ	Տնտեսութ. թիվը
1050	1119	145	5	18	0	27	37	1	475

Եղեգնուտ բնակավայրի հողերի կազմը ներկայացված է աղյուսակ 15-ում:

Ոռոգման ջրերի ընդհանուր երկարությունը կազմում է 150կմ, որից Եղեգնուտ բնակավայրում՝ 87կմ:

Վերանորոգման կարիք ունեցող փողոցների և ճանապարհների երկարությունը ընդհանուր Մեծամոր համայնքում կազմում է 233.5կմ, որից Եղեգնուտ բնակավայրում 2կմ:

Հողային տարածքը	Բնակավայրի հողեր	Գյուղ. նշան. հողեր	Արդյունաբեր., ընդերօգտագործման, այլ արտատրական նշանակ. հողեր	Էներգետիկայի, կապի, Տրանսպորտի և կոմունալ ենթակառ. հողեր	Հատուկ պահպանվող տարածքների հողեր	Հատուկ նշանակության շինություններ	Ջրային հողեր	Անտառ
2160.20	215.05	1817.74	44.14	15.01	27.31	0	40.95	0

Համայնքի տարածքում գործում է «Մեծամոր բժշկական կենտրոն» ՓԲԸ, որն իր մեջ ներառում է հիվանդանոց և պոլիկլինիկա: Հիվանդանոցը նախատեսված է 60 մահճակալի համար:

Օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը ներկայացված է գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ և ջրային նպատակային նշանակության հողերով (ծածկագրերը՝ 04-039-0253-0022, 04-039-0253-0009, 04-039-0253-0023, 04-039-0253-0027, 04-039-0253-0018, 04-039-0263-0001, 04-039-0253-0024, 04-039-0253-0010, 04-039-101-001, 04-039-104-002):

Ծրագրավորվող աշխատանքների բնույթը և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը ներկայացվել են Մեծամոր համայնքի բնակիչներին: Քննարկվել է աշխատանքներին համայնքի բնակիչների ներգրավման հարցը: Կից ներկայացվում են քննարկումների արձանագրությունը և տեսաձայնագրությունը:

▪ **Պատմության, մշակութային հուշարձաններ**

ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 3-ի N1589-Ն և 2007 թվականի մարտի 15-ի N385-Ն որոշումներով հաստատվել է ՀՀ Արմավիրի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը: Եղեգնուտ բնակավայրում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հաշվառված չեն:

Հետևաբար հայցվող տեղամասում ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները չեն կարող բացասաբար անդրադառնալ պատմամշակութային հուշարձանի իրավիճակի վրա:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Եղեգնուտի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի օգտակար հաստվածքի երկրաբանական ուսումնասիրության արդյունքում ձևավորվելու են որոշակի ազդեցություններ մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

Մթնոլորտային օդ.

Տեղամասի տարածքում վնասակար հազերի և փոշու արտանետումները կապված են լինելու ավտոտրանսպորտի և սարքավորումների աշխատանքի հետ: Հետախուզական փորվածքների անցման ժամանակ փոշու արտանետումներ չեն լինելու, քանի որ ավազակոպճային կուտակը գտնվում է խոնավ վիճակում:

Փոշեգոյացում կատարվելու է տեղամասից դուրս՝ ավտոճանապարհներին, աշխատանքները սպասարկող տրանսպորտի տեղաշարժի ժամանակ:

Աշխատանքների իրականացման ժամանակ ընկերությունը առաջնորդվելու է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ, համաձայն որի աշխատանքների տարածքին հարակից բնակավայրերում ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի (երկօքսիդի հաշվարկով), մրի և ծծմբային անհիդրիդի սահմանային թույլատրելի խտությունները (ՄԹԿ) համապատասխանաբար պետք է կազմեն $5մգ/մ^3$, $0.2մգ/մ^3$, $0.15մգ/մ^3$ և $0.5մգ/մ^3$:

Նախնական հաշվարկներին համաձայն, երևակման տարածքում վնասակար գազերի առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Այդ նպատակով ծրագրավորվում են մի շարք բնապահպանական կառավարման միջոցառումներ, որոնց նկարագիրը ներկայացված է ստորև, 5-րդ գլխում:

Ջրային ավազան.

Տեղամասում մակերևութային բնական ջրային հոսքեր՝ գետեր, լճեր չկան: Հետևաբար, մակերևութային ջրային ռեսուրսների վրա ազդեցություններ չեն դրսևորվելու :

Փորվածքների անցման ժամանակ կանխատեսվում է հորերի ջրակալում, քանի որ համաձայն ֆունդային նյութերի տեղամասին հարակից Արաքս գետի հարավային հնահունի 1.0-3.0մ խորություններում առկա է անճնշում գրունտային ջրերի հորիզոն :

Հողային ծածկույթ.

Հայցվող տարածքում առկա է սակավ՝ 0.1-0.3մ հզորությամբ գորշ ոռոգելի հողերի ծածկույթ : Հետախուզական հորերի անցման ժամանակ կատարվելու է այդ տիպի հողերի խախտում 168մ² տարածքում :

Կարճատև ազդեցություն է դրսևորվելու հետախուզահորերի հարակից տարածքի գորշ ոռոգելի հողերի վրա մակաբացման շերտի հողային զանգվածի կուտակման ժամանակ :

Տեղամասի տարածքում նոր ճանապարհների շինարարություն չի նախատեսվում, հողերի օտարում ճանապարհների համար չի պահանջվում :

Աշխատանքների այս փուլում տեղամասում նախատեսված չէ արտադրական հրապարակի շինարարություն, հողերի օտարում այս նպատակով նույնպես չի կատարվելու :

Մեքենաների հիմնական լիցքավորումը, սպասարկումը կատարվելու է Եղեգնուտ կամ հարակից այլ բնակավայրում : Երևակման տարածքում պահեստային, փոքր քանակություններով (մոտ 20լ) վառելիքը նախատեսվում է պահել աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի թափքում՝ անթափանց տառայով, ինչը բացառում է տեղամասի մակերևույթի աղտոտումը նավթամթերքներով :

Բուսական և կենդանական աշխարհ.

Երկրաբանական ուսումնասիրության բացասական ազդեցությունը տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա գրեթե զրոյական է, քանի որ հետախուզահորերի անցման ժամանակ խախտվող տարածքները վերականգնվելու են անմիջապես նմաշարկման և փաստագրման աշխատանքներից հետո:

Երկրաբանահետախուզական աշխատանքների տեխնոլոգիական գործընթացը բացառում է ազդեցիվ նյութերի կիրառումը, չեն նախատեսվում նաև հորատապայթեցման աշխատանքներ:

Կենդանական աշխարհի վրա առավել ազդեցիկ գործոնը կապված է լինելու աղմուկի և թրթռումների հետ: Բուսականության վրա բացասական ազդեցություն գրեթե չի դրսևորվելու: Տեղամասի տարածքում դիտարկված բուսատեսակները լայն տարածված են ՀՀ անապատային-կիսաանապատային լանդշատային գոտում:

ՀՀ Բույսերի և Կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներ Եղեգնուտի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասում չեն դիտարկվել:

Բնության հատուկ պահպանվող տարածքների վրա ազդեցությունների դրսևորում չի նախատեսվում, քանի որ «Որդան կարմիր» պետական արգելավայրը գտնվում է տեղամասից մոտ 0.92-9.7կմ, իսկ «Մեծամորի լիճ» ջրագրական, կենսաբանական ու «Ավազասեր բուսականություն» հուշարձանները՝ համապատասխանաբար 6.5 և 18կմ հեռավորությունների վրա:

Աղմուկ և թրթռումներ.

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Մոտակա Եղեգնուտ բնակավայրի տարածքում աղմուկի նորմավորման հետ կապված խնդիրները կանոնակարգվում է «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-111-11.3 ՀՀ սանիտարական նորմերով:

Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում՝ 80դԲԱ:

Տեղամասի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են հետախուզահորերի անցումն ու աշխատանքները սպասարկող տրանսպորտի տեղաշարժը: Տեղամասում հետախուզական աշխատանքների ընթացքում առաջացող զուամրային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ կազմում է 70դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում (Եղեգնուտ բնակավայր) որոշվում է՝

$$LA_{տար} = La_{էկվ} - \Delta L_{ահեռ} - \Delta L_{աէկր} - \Delta LA_{կանաչ բանաձևով, որտեղ՝$$

$$LA_{էկվ} - \text{աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, } LA_{էկվ}=70\text{դԲԱ,}$$

$\Delta LA_{հեռ}$ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված, $\Delta LA_{հեռ}$ կազմում է 25դԲԱ,

$\Delta LA_{էկր}$ - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով (տեղամասի ռելիեֆ), $\Delta LA_{էկր} = 15$ դԲԱ,

$\Delta LA_{կանաչ}$ - աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, $\Delta LA_{կանաչ} = 5$ դԲԱ:

Աղմուկի մակարդակը Եղեգնուտի գյուղի մոտ կկազմի՝

$$L_{առար} = L_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ} = 70 - 25 - 15 - 5 = 25 \text{դԲԱ}$$

(նորման 45դԲԱ):

Հետևաբար, ավազակոպճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ առաջացող աղմուկն ու թրթռումը հարակից բնակավայրերի տարածքում ազդեցություն բնակիչների վրա չեն ունենալու:

Հարավ-Արևելյան տեղամասի տարածքում սանիտարական պաշտպանության գոտու սահմանում պահանջող օբյեկտներ (օրինակ՝ ջրամատակարարման կառույցներ) չկան:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ առաջանալու է առաջին կարգի թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող բեռնատարի հետ: Նախնական գնահատականներով, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում առաջանալու է մոտ 40դԲԱ աղմուկ:

Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

Նորմատիվային փաստաթղթերով սահմանված ցուցանիշներն ապահովելու համար են մի շարք բնապահպանական կառավարման միջոցառումներ, որոնց նկարագիրը ներկայացված է ստորև, 5-րդ գլխում:

Պատմամշակութային հուշարձաններ ավազակոպճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքում, ազդակիր Եղեգնուտ բնակավայրում չկան, ինչը բացառում է որևիցե բացասական ազդեցությունների դրսևորում պատմամշակութային ժառանգության օբյեկտների վրա:

Աղտոտում ընդերքօգտագործման թափոններով.

Երկրաբանական ուսումնասիրության ժամանակ առաջանացող թափոնների տեսակների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև:

Մեքենաների շահագործման ընթացքում կարող են առաջանալ օգտագործված դիզելային և բենզինային շարժիչների յուղեր, որոնք պատկանում են «Բանեցված շարժիչների յուղերի թափոններ» տեսակին, վտանգավորության 3-րդ դասին, ծածկագիր՝ 5410020102033: Սակայն մեքենաների ընթացիկ տեխնիկական սպասարկում հայցվող տեղամասում չի կատարվելու, հետևաբար բուն տեղամասի տարածքում այս տեսակի թափոնի առաջացում/կուտակում չի նախատեսվում :

Առաջանալու է չտեսակավորված կենցաղային աղբ, որը պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 9120040001004, օրական առավելագույնը 10կգ քանակությամբ :Կազմը՝ ապակի 9-14%, սև մետաղ 20-25%, փայտ 8-13%, թուղթ 25-30%, կտոր 3-7%, սննդի մնացորդ 11-15%, պոլիմերներ 7-12%:

Հետախուզահորերի անցման ժամանակ առաջացող հողաբուսական շերտը չի հանդիսանում թափոն :

Սանիտարական պահպանության գոտի. Ըստ ՄՆ 245-71 սանիտարական նորմերի՝ ավազակոպճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության ձեռնարկությունների համար սանիտարական պաշտպանիչ գոտի սահմանված չէ:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Վառելիքի լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքների հիմնական ծավալը կատարել հարակից բնակավայրերում՝ համապատասխան ծառայություն մատուցող կայաններում:
- Աշխատանքների ժամանակ կիրառվող սարքավորումների և աշխատանքները սպասարկող մեքենաների վրա տեղադրել արտաթորվող թունավոր նյութերի ֆիլտրեր:
- Փոշենստեցման նպատակով աշխատանքների տեղամասին մոտեցնող ճանապարհի ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին : Տեխնիկական նպատակներով անհրաժեշտ ջուրը նախատեսվում է վերցնել տեղամասից հյուսիս գտնվող Արաքս գետի հնահունի տարածքում ձևավորված բազմաթիվ լճակներից : Ըստ գործող նորմատիվների՝ 1մ^2 տարածքի ջրցանման համար անհրաժեշտ տեխնիկական ջրի քանակը կազմում է 1,5լ: Տեխնիկական ջրառ իրականացնելու համար նախատեսվում է դիմել ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ ջրօգտագործման թույլտվություն :
- Խմելու և կենցաղային նպատակներով անհրաժեշտ ջուրը գնվելու է մոտակա բնակավայրերի խանութների շշալցված տարբերակով (5-6լ տարողությամբ տարաներով), տեղափոխվելու է տեղամասի տարածք աշխատանքները սպասարկող մեքենայով :
- Աշխատակիցների կենցաղային պայմանների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է տեղադրել բեռնակղային տիպի վագոն-տնակ, որը կօգտագործվի որպես հանդերձարան և հանգստի սենյակ : Ջրցողարանի տեղադրում չի նախատեսվում :

- Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով՝ պայմանագրային հիմունքերով : Դատարկված հորը լցվելու է քարերով :
- Կենցաղային աղբի համաքում հատուկ անթափանց տարողություններում, 50լ տարողությամբ պոլիէթիլենային պարկերում, աղբահանության պայմանագրի կնքում տարածաշրջանում գործող օպերատորի հետ, աղբահանության վճարի հաշվարկում և վճարում:
- Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով: Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 80դԲԱ: Հետախուզական աշխատաքների տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թոթրումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:
- Տեղամասի տարածքի և Արաքսի հնահունի գրունտային ջրերի նավթամթերքներով աղտոտումը կանխելու նպատակով հաստվածքի մակերևույթին հետախուզահորերի անցման ժամանակ օգտագործվող էքսկավատորի շարժման ուղեծրով կտեղադրվեն երկաթբետոնե տիպային սալիկներ:
- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելիս ընկերության կողմից գործունեության հայտում և հետագայում՝ գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են հողերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

1) վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմին:

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Տեղամասում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է՝

1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով:

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը:

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

- Շրջանի կենսաբազմազանության պահպանության նպատակով Եղեգնուտի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներին մասնակցող անձնակազմը անցնելու է հատուկ վերապատրաստում և ծանոթանալու է շրջանում հայտնի՝ ՀՀ կենդանիների և բույսերի կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ:
- Աշխատակիցների հրահանգավորում, ծանոթություն անվտանգության տեխնիկայի կանոններին:
- Տեղամասի տարածքի պարագծով տեղադրվելու են նախագուշացնող նշաններ, ինչը թույլ կտա կանխել անվտանգության տեխնիկայի հրահանգավորում չանցած մարդկանց մուտքը հայցվող տարածք:
- Ընդերքօգտագործման թափոնների կառավարում:
- Նախքան հետախուզահորերի անցումը տեղամասի տարածքի դիտարկում՝ թռչունների կամ կաթնասունների բների, որջերի հայտնաբերման նպատակով: Դրանց դիտարկման դեպքում, Էկոլոգ մասնագետների մասնակցությամբ, բների տեղափոխում նմանատիպ լանդշաֆտային բնութագրեր ունեցող տեղամաս:
- Նախքան հետախուզահորերի անցումը տեղամասի դիտարկում, սողունների հայտնաբերման նպատակով: Դրանց դիտարկման դեպքում, համապատասխան որակավորման մասնագետների մասնակցությամբ, առանձնյակների տեղափոխում նմանատիպ լանդշաֆտային բնութագրեր ունեցող տեղամաս:
- Տեղամասում ԽՍՀՄ տարիներին անցած, ներկայումս չգործող, մասամբ քանդված, փլուզված, հողային զանգվածով և աղբով լցված առուների վրա ազդեցությունը բացառելու նպատակով հետախուզական առուների անցումն իրականացնել դրանցից առնվազն 2մ հեռավարության վրա:
- Բացառել երկրաբանական հետախուզական փորվածքների տեղադրումը ջրային հողերի տարածքում:
- Պաշարների հաշվարկման ընթացքում բացառել ջրային հողերի ներառումը հաստատվող պաշարների եզրագծում:
- Պատահական գտածոների ընթացակարգի կիրառում: Ընթացակարգն ուղղված կլինի հողային աշխատանքների ընթացքում բացահայտվելիք բոլոր գտածոներին՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

- Համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;
- Հուշարձանների գննության իրականացում, նախքան շինարարական աշխատանքների սկիզբը, երբ հողը մաքրված է ,
- Հնագետների տեղաբաշխումը շինարարության վայրերը վերահսկելու համար, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը հողային աշխատանքների իրականացման ընթացքում,
- Արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում և գնահատում հնագիտական մոնիտորինգի միջոցով;
- Անհրաժեշտության դեպքում պետական մարմինների ծանուցում,
- Պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով շինարարական աշխատանքների ուշացումները,
- Մոնիտորինգային գործունեության և պատահական գտածոների արձագանքման վերստուգիչ գրանցումների վարում:

- Հետախուզահորերի տարածքների ռեկուլտիվացիա: Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հանել 50.4մ³ ընդհանուր ծավալով գորշ ոռոգելի հողի շերտը, այն պահեստավորել հորերի մոտակայքում, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով հետ լցնել այնուվիպակ-դեյուվիպակ առաջացումները, այնուհետև տարածքը ծածկել հողաբուսական շերտով:

Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը հաշվարկվում է տարածքի մակերեսից և վերականգնվում է 0.3մ խորության վրա:

Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր մակերեսը կազմում է 168մ²:

Հետախուզահորերի անցման ժամանակ առաջանում է 1344մ³ լեռնային զանգված, այդ թվում 1293.6մ³ այնուվիպակ-դեյուվիպակ առաջացումներ ու 50.4մ³ հողաբուսական

շերտ: Այդ ծավալները կարճաժամկետ կուտակվում են խախտված տարածքների անմիջական հարևանությամբ առանձին-առանձին և աշխատանքների անմիջապես ավարտից հետո ամբողջությամբ օգտագործվում են խախտված հողատարածքների վերականգնման համար: Աշխատանքները կատարվելու մեխանիզացված եղանակով՝ հորերի անցման համար օգտագործվող էքսկավատորի կիրառմամբ:

Այնուհետև իրականացվելու է նաև վերականգնված տարածքների կենսաբանական ռեկուլտիվացիա: Այս նպատակով հետախուզահորերի հարթեցված, փխրեցված տարածքները պարարտացվելու են, կատարվելու է կաթնբեկի, սպիտակ թելուկի, սիզախոտի, շոյուղախոտի և դաշտավուկի սերմերի ցանք:

Ռեկուլտիվացիայի համար պահանջվող ծախսերի հաշվարկը ներկայացված է աղյուսակ 16-ում:

Աղյուսակ 16.

Հ/Հ	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափ. միավորը	Արժեքը
1.	Էքսկավատորի վարորդի աշխատավարձ	հազ.դրամ	35.0
2.	Վառելիք	«----»	15.0
4.	Կենսաբան-մասնագետի աշխատավարձ ռեկուլտիվացիայի կենսաբանական փուլի համար	«----»	50.0
4.	Նյութեր (պարարտանյութ, սերմեր, դուլ, փոխց) ռեկուլտիվացիայի կենսաբանական փուլի համար	«----»	63.0
	Ընդամենը	«----»	163.0
4.	ԱԱՀ 20%	«----»	32.6
	Ընդամենը	«----»	195.6

Ծրագրավորված բնապահպանական միջոցառումները ներկայացվում են նաև աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 17.

Գործողությունը	Հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բնական բաղադրիչի վրա	Չեզոքացման միջոցառումը	Արժեքը	
1	2	3	4	
Հետախուզական փորվածքների անցում, տրանսպորտի տեղաշարժ	Փոշու և ծխազագերի արտանետումներ, մթնոլորտային օդի որակի փոփոխություն	Ջրցան	Տարեկան 50.0հազ.դրամ	
		Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում	Մեքենաները կահավորված են համապատասխան սարքերով, լրացուցիչ ծախս չի նախատեսվում	
		Մթնոլորտային օդի որակի պարբերական մշտադիտարկում	Տարեկան 120.0հազ.դրամ	
	Հողերի խախտում հետախուզական հորերի սահմաններում	Խախտված տարածքների վերականգնում (լեռնատեխնիկական և կենսաբանական փուլերով)	Խախտված տարածքների վերականգնում	195.6հազ.դրամ*
				Տեղամասի տարածքի հողերի աղտոտում նավթամթերքներով
	Տեղամասի տարածքի հողերի աղտոտում նավթամթերքներով	Բետոնե սալերի տեղադրում տեխնիկայի տեղաշարժի համար	Բետոնե սալերի տեղադրում տեխնիկայի տեղաշարժի համար	115.0հազ.դրամ

		Հողերի աղտոտվածության պարբերական մշտադիտարկում	Տարեկան 80.0հազ.դրամ
	Արաքսի հնահունի տարածքի գրունտային ջրերի աղտոտում նավթամթերքներով	Տրանսպորտի տեղաշարժ բացառապես գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհներով և բետոնե սալերով	115.0հազ.դրամ
	Բուսածածկի խախտում հետախուզական հորեր սահմաններում	Խախտված տարածքների վերականգնում (լեռնատեխնիկական և կենսաբանական փուլերով)	195.6հազ.դրամ*
		Կենսաբազմազանության մշտադիտարկում, տարեկան մեկ անգամ պարբերականությամբ	Տարեկան 250.0հազ.դրամ
		ՀՀ կառավարության 2014թ. հունիսի 31-ի N781-Ն որոշման պահանջների ապահովում	Տարեկան 75.0հազ.դրամ
	Կենդանիների միգրացիա լանդշաֆտի խախտման և առաջացող աղմուկի հետևանքով	Խախտված տարածքների վերականգնում (լեռնատեխնիկական և կենսաբանական փուլերով)	195.6հազ.դրամ*
		Աղմուկի մակարդակի չափումներ	Տարեկան 80.0հազ.դրամ
Անձնակազմի կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում	Տեղամասի տարածքի աղբոտում կենցաղային թափոններով	Կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ և հետագա տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր	Տարեկան 150.0հազ.դրամ
	Տեղամասի տարածքի աղտոտում կենցաղային արտահոսքերով	Հորատիպ բետոնապատ անջրաթափանց զուգարանի շինարարություն	Կատարվելու է նախքան հետախուզական աշխատանքների մեկնարկը, 25.0հազ.դրամ
		Հորատիպ զուգարանի դատարկում հատուկ ծառայության ուժերով	Տարեկան 80.0հազ.դրամ

* նույն գումարն է, որը վճարվում է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշման դրույթներին համապատասխան

6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Եղեգնուտի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի տարածքում հնարավոր արտակարգ իրավիճակների նկարագիրը ներկայացվում է ստորև :

I. Արտածին երկրաբանական երևույթներով պայմանավորված արտակարգ իրավիճակներ

Եղեգնուտի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի տարածքը հարում է Միջին Արաքսյան գոգավորության ցածրադիր մասին՝ միջլեռնային տեկտոնական իջվածք հանդիսացող Արարատյան դաշտին : Դաշտը ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ավելի քան 200կմ, 25-45կմ լայնությամբ : Տարածքի մակերևույթը հարթ է, գրեթե հորիզոնական, առաքձին հատվածներում՝ թույլ գառիկող, թեքության անկյունը տատանվում է 4-9° սահմաններում:

Համաձայն Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագրի (Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005) տեղամասի շրջանում սողանքային երևույթներ չեն արձանագրվել: Հետևաբար, սողանքային երևույթների հետ կապված արտակարգ դրություններ չեն լինելու:

II. Երկրաշարժով պայմանավորված արտակարգ իրավիճակներ

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N 102-Ն հրամանի՝ Հարավ-արևելյան տեղամասը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ² գրունտի հորիզոնական արագացման մեծություն:

Երկրաշարժի հետ կապված արտակարգ իրավիճակներում արագ արձագանքելու նպատակով նախատեսվում է տեղամասում աշխատող անձնակազմի համար կազմակերպել իրազեկման դասընթացներ և ներկայացնել գործողությունների համառոտ ծրագիրը: Երկրաշարժի դեպքում՝ ցնցումները զգալու ժամանակ հանքում աշխատող անձնակազմը պարտավոր է.

- անջատել բոլոր գործող սարքավորումները, մեխանիզմներն ու մեքենաները,
- հեռանալ մեքենաների և մեխանիզմների տեղակայման վայրից,
- դուրս գալ վազոն-տնակից,

- կանգնել բացօթյա տարածքում,
- կապ հաստատել կազմակերպության ղեկավարության հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,
- կապ հաստատել տարածքային կառավարման մարմինների հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,
- հանքի սպասարկող մեքենաներով ապահովել աշխատակիցների տարհանումը,
- տեղամասում տեղադրված վագոն-տնակում ապահովել առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղորայքի առկայությունը:

III. Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Տեղամասի հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

V. Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուխ, ամպրոպ): Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների իհայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- ավելացվում է կատարվելիք ջրցանը,
- կրճատվում է աշխատանքի տևողությունը,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- նվազեցվում է փոշեգոյացման հետ կապված աշխատանքների ծավալները,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով,
- աշխատակիցները պատսպարվում են տեղամասի տարածքում տեղադրված վագոն-տնակում:

Տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,
- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին, ոչ ուշ քան երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Ավագակոպճային խառնուրդի հետախուզման ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,
2. նավթամթերքներով տեղամասի տարածքի աղտոտվածության մշտադիտարկում՝ ամսեկան մեկ անգամ,
3. Աղմուկի մակարդակի չափումներ՝ տարեկան մեկ անգամ,
4. Հարավ-արևելյան տեղամասի և հարակից տարածքում կենսաբազմազանության դիտարկում,
5. Արաքսի հնահունի տարածքի գրունտային ջրերի քանակական և որակական մշտադիտարկում, տարեկան չորս անգամ

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում :

Կենսաբազմազանության դիտարկումը կատարվելու է համապատասխան մասնագետների կողմից (բուսաբան, կենսաբան)՝ պայմանագրային հիմունքներով:

Մշտադիտարկման տեսակների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է նաև աղյուսակ 18-ում :


Մշտադիտարկումների կատարման համար տարեկան նախատեսվում է մասնահանել 530.0հազ.դրամ :

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետերի նախնական տեղադիրքը ներկայացված է ստորև նկար 18-ում:

Աղյուսակ 18.

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ազդեցության դրսևորման հիմնական աղբյուրները	Մշտադիտարկումների տեսակը, պարբերականությունը
1	2	3	4
Անօրգանական փոշի, ծխազագեր	Տեղամասի տարածք	Մեքենաների տեղաշարժ, փորվածքների անցման աշխատանքներ	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ռեսուրսներ	Տեղամասի տարածք	Աղտոտում նավթամթերքներով, դեզրադացում մեխանիզմների, մեքենաների աշխատանքի հետ կապված	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, ամսական մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	Տեղամասի տարածք և հարակից շրջան	Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ի արդյունքում տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում տարեկան մեկ անգամ
Աղմուկի մակարդակ	Տեղամասի տարածք	Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ	Չափումներ ավտոմատ սարքերով
Գրունտային ջրեր	Տեղամասին հյուսիսից հարակից տարածք	Մթնոլորտային տեղումներ	Մակարդակի չափումներ, նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, տարեկան չորս անգամ

Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի
 Մշտադիտարկման կետերի սխեմատիկ քարտեզ



Նկար 18.

Օգտագործված գրականության ցանկ

1. «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
8. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
9. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
10. “Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
11. “Цветущие уголки биоразнообразия”, FAO,
<http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>
12. ՀՀ Արմավիրի մարզպետարանի պաշտոնական կայք

Փաստացի առկա ոռոգման ցանցի տեղադիրքը

